

Ե Օ Ր Ե Ր Բ Ի Տ Ա Ր Ի

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисс. Редакция „Маяк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կօպէկ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:—Ներքին տեսչի և Կառավարության Կոմիտեի Գանձակից: Նամակ Երևանից: Նամակ Գանձակից: Նամակ Սուխարայից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսչի և Կառավարության Կոմիտեի Կառավարությանը: Հայոց խնդիրը Անգլիայում:—«Մըշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՃՔԵՐԸ

Քաղաքական գործերի դրութիւնը այս քանի օրերս առանձին փոփոխութեան չէ ենթարկվել: Ստացված հեռագիրներից ոչինչ ճիշդ եզրակացութեան չէ կարելի հասնել, որովհետև նորս փշոտ միմեանց հակասող լուրեր են բերում:

Ռուսաց զորքերի և անգլիական նաւատորմի Կ. Պոլսից միաժամանակ հեռանալու հարցը մի կողմից և կոնգրեսի կայանալը միւս կողմից՝ սաքա են այն կէտերը, որոնց վրա այժմ ուշադրութիւն է դարձրել զիպլոմատիան և թէպէտ անգլապար մեզ լուրեր են հասնում, որ անգլիական և ռուսաց կառավարութիւնները համաձայն են հեռացնել իրանց պատերազմական սլոխերը Կ. Պոլսից, նորս մնում են իրանց տեղը, օգնութիւն են ստանում, ամրացնում են իրանց զիւրքերը և այլն:

Այս բոլոր հանգամանքները տեղիք են տալիս մտածել, որ ներկայ հարցը խաղաղ կերպով չէ կարող վերջանալ:

Քանի որ ռուսները և անգլիացիք չը զաղարեցնելով բանակցութիւնները, շարունակում են պատերազմի պատրաստութիւնները տեսնել, Թիւրքիան էլ անգործ չէ մնում:

Թիւրքիան նոյնպէս պատրաստվում է: Նա կարգադրում է իր զորքերի մնացորդը, նոր զորքեր է հաւաքում և յայտնի պատերազմական ընդունակութիւն ունեցող անձանց, ինչպէս Օսման և Մուխթար փաշաներին, նշանակում է նոր զորքերի հրամանատարներ: Ամեն բանից երևում է, որ Թիւրքիան նոյնպէս մտանակից կը լինի պատերազմին, եթէ գործը հաշտութեամբ չը վերջացաւ և հաւանական է, որ նա կը պատե-

րագմէ իբրև Անգլիայի դաշնակից, որովհետև վերջին ժամանակները Թիւրքիան չէ կատարում այն պարտաւորութիւնները, որ դրել է նրա վրա հաշտութեան պայմանագիրը, օրինակ Բաթումի և մի քանի ամրոցների մարքերը նա անգաղաք յետաձգում է:

Աստիճան ցոյց չէ տալիս թէ ինքն ո՞ր կողմը կը լինի: Նրա քաղաքականութիւնը նոյնքան երկզիմի, նոյնքան նենգաւոր է, որքան Անգլիայի քաղաքականութիւնը: Յայտնի է, որ վերջին դաշնագրին համեմատ ստեղծված դրութիւնը արևելքում փաստում է Աստիճանի շահերին և նա միայն այն դէպքում կարող է Ռուսաստանի կողմը լինել, կամ չէզոք մնալ, եթէ ռուսները կը փոխեն պայմանագրի այն բոլոր կէտերը, որոնք Աստիճանի շահերին են վերաբերում:

Քաղաքագետ անձինք նոյնպէս քիչ յոյս են դնում գործի խաղաղ վախճանի վրա և բանակցութիւնները երկարացնելով սպասում են մի պատահական դէպքի, որ կարող էր գործի դրութիւնը բոլորովին կերպարանափոխել:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

12 ապրիլի

Այժմ այստեղ ամենքը լարված դրութեան մէջ են. պատերազմ, հաշտութիւն, Անգլիա, Ռուսաստան ինչ կուզէ թող լինի, այդ ոչ ոքի փոյթ չէ, Չատիկը գալիս է պատրաստվելու որքան կարող ենք պատշաճաւոր կերպով դիմաւորել նրան: Նայեցէք երևանցիներին, գնացէք փողոցը, այնտեղ սովորականից դուրս շարժում է նկատվում, խանութները լքեք, որը մի բեռ ապրանք աշակերտի շարքը տուած տուն է ուղարկում, որպէս զի իր տանտիկինը իր ճաշակի յարմար կտոր վերցնի, մի ուրիշ խանութում կը տեսնէք աւելի լուսաւարված հայուհիներ: Հայ կինը քանզի է նախապաշարմունքի դարձնող պարիսպը, նա հասկացել է, որ այլ ես ստրուկ չէ, փողոցը դուրս գալով նա չէ մեղանչում համետութեան դէմ: Մտէք մի ուրիշ խանութ այնտեղ խորամանկ վաճառականը մի թանկագին մետաքսեղ կտոր իր վարժված ձեռքերի տակ խաղացնում է արջինի վրա, խեղճ գնողը շարքի է աչքերը, որպէս զի վաճառականը խարդալու չը վարվի իր հետ, ինչ անի ողորմելին, արջինի երկու ռուբլոց աւելի փող է վճարում, տեղական վերջին ժողայի համար հազիւ թէ բաւականացնում է 25—30 արջինը, Տեսնում էք լայն հրապարակի վրա մարդիկ դանազան խմբեր կազմած, մինը նրանցից ինչ տեսակ նախատիքը ստես թափում է հարկը ձուկն եր-

կու մանէթ գին դնող գիւղացու գլխին: Այսպէս ով էր տեսել էսթափուր այլամ, հարկերը երկու մանէթ ձուկն Այս երեւոյթը հայի սրտի մարձն է շարժում: Այստեղ մի ուրիշ վաճառական կօպէկներով աւելացնում է թուրքի առաջ թուրք կոտող գառնուկների գինը. «չորս մանէթից պակաս չի լինի» ծնողը երկայն գաւազանի ծայրին ամրացրած պատասխանում է անտաշ թաւաքեաման: Մեր վաճառականը հազար ու մի առակներով հազիւ կարողանում է մի փոքր պակաս գնով առնել, գնա անմեղ անասուն երկու օրից յետոյ այդ մարդու տան սեղանի զարդն են կազմելու: Մի ուրիշ անկիւնից տեսնում ես մի ռուս ծառայ խոզի ձագի մի ոտից բռնած քաշ է տալիս անհոգ կերպով այդ անշնորհ անասունի զարդիլը աղաղակը պղծում է զուրանի որդիներին անարատ լսողութիւնը: Մուստաֆա մեթմութում է քիթի տակին հաջի Նովրուզ Ալին և աշխատում է որքան կարող է շուտով հեռանալ այդ տեղից: Բայց կան մարդիկ, որոնց համար Չատիկը սև է լինում. նախը մէկին՝ նա շատ ծանր քայլերով մի կողմի վրա է գնում, դա էլ ընտանիքի հայր է. տանից դուրս գալիս մի անագին ցուցակ է ստացել էս առ, էն առ, նա գնում է, բայց մի գաղտնիք ալեկոծում է նրա սիրտը, նա շատ սիրով կատարել է ուղում իր կնոջ, երկայնի հաճոյքը, բայց գրպանում փող չունի: Նա երբեմն յաջող առևտրական էր, ամենքը նրան յարգում պատուում էին. բայց իր միամիտ գործունէութեամբ չը կարողացաւ դէմ դնել ստատանայական որոգայթներին դէմ, նրա գործած աղետութիւնը այժմ անդառնութիւն է համարվում և այդ առիթ էրաւ խեղճի չքաւորութեան մէջ ընկնելուն: Գուք դիտէք ընթերցող միայն Չատիկի և Ջորջիանայ մտերմքին հարցը դուրսեան օրերն են, թէ զեղեցիկ սեռը և թէ ինչ կարիք մարդ ստես եկեղեցի են շտապում, պառաւանները այնքան աչքի չեն ընկնում, այժմ հերթը շահերիցն էր և տուած, մանաւանդ այն ջանք օրիորդներին որոնք կամենում են ամեն յաջող րօպէից օգուտ քաղել: Այժմ նայեցէք երեկոյան չորս ժամից սկսած Ատաֆիլիսիլի փողոցը, այդտեղ կարծես զբոսարանի գեղեցիկ հովիտներից միմն է. Գեղեցիկ սեռը իր բոլոր փարթաւութեամբ Աստուծոյ տունը աղօթելու է գնում. փողբիկ մանուկներ, կարծես անմեղ հրեշտակներ թռչկոտում են նրանց առաջ: Ես ասացի հազարութեան օրեր են, ահա մի լօթի շարժուման, որը երկու օր առաջ կարծես աշխարհի իշխանն էր, այժմ խղճմտանքը արթնացել է նրա մէջ, նախախնամութիւնը նրա վրա կարծես թէ հանետութեան մի քող է փռել, նա պատրաստվում է հաղորդութեան վրտ խորհրդին մի փոքր պատշաճաւոր դիտարով մերձենալ: Ապաշխարութեան օրերին կատարում է և իր քրիստոնէական պարտքը այն հարստահարող վաճառականը որը եկեղեցում մի յայտնի տեղ ձուկն չըբած արտասունք է թափում փրկչական պատկերի առաջ. դրա դրսի գործած խաբէրայութիւնների վրա կրիտիկա պէտք է թէ ոչ, դրա վրա վաղուց է նա յայտնել է իր արհամարհանքը. այդ է առուտուրը կը պատասխանի, և դրանով վերջացնում է ամեն բան:

Ա. Նր.

ՆԱՄԱԿ ԳՈՆՁԱԿԻՑ

10 ապրիլի

Մեր հայ պարբերական թերթերի ընթերցողներին արդէն յայտնի է թէ՛ հանգուցեալ տիկին Խանում Կուզանեանցի իր շարժական և անշարժ կայքերը տեղիս հոգևոր երկրես զպրոցներին կտակելը և թէ՛ նոյն կտակի տեղոյս նախնազական դատարանում հաստատվելը: Հանգուցեալ Խանում Կուզանեանցի երկրորդ այր Եղապար Բաղդասարեանը դեռ հանգուցեալի կենդանութեան ժամանակ ինչից ունէր տուած դատարանում,

որ նրա կին Խանումն իրան արտաքսելով տանից իւրացրել է իր 1990 ռուբլին, որը մնացել է տանը արկղի մէջ: Այդ խնդիրը նրա կենդանութեան ժամանակ վերջնական վճիռ չը ստանալով մնացել էր ցարդ, որը ամսոյս 5-ին լքուվում էր տեղիս նախնազական դատարանում: Պատասխանատու էին կտակակատարները, որոնց հաւատարմատարն էր Լազար Իվանիչ Լազարեանց: Կատարանը Բաղդասարեանցի խնդիրը անհիմն համարելով բացասեց նրան, ազատելով Կուզանեանցի կտակակատարներին պատասխանատուութիւնից: Գլխաւոր վտանգները անցան, կտակը ըստ օրինի հաստատվեց, Բաղդասարեանցին բացառվեց, այժմ մեր կտակակատարներին մնում է մի բան, որը եթէ աշխատեն, յուսալի է որ այդ ես վերջնայ յօդուտ ուսումնարար: Հանգուցեալ Խանում իր կենդանութեան ժամանակ օրինաւոր հաւատարմագրով իրաւունք էր տուել իր երկրորդ այր Ե. Բաղդասարեանցին իր կայքերը կառավարելու: Վերջինը այն քարավանսարան որ Կուզանեանցի բաժին տարեկան կապալ էր բերում մտատարապէս 800 ռ., տաս տարով օրինաւոր պայմանագրով կապալով է տուել պ. Յ. Իւրբալեանցին տարեկան 200 ռուբլով: Ահա թէ ինչու է կտակակատարների դժուարութիւնը, որ եթէ կարողանան պէտք է ոչնչացնեն Բաղդասարեանցից տուած պայմանագիրը:

Գանձակի հայ հասարակութիւնը կարծես քնից արթնանալու վրա է, նա հազիւ հասկանալով մեր հոգևոր ուսումնարանի շինութեան վնասակարութիւնը և անյարմարութիւնը խնդրագիր կազմելով թեմակալ առաջնորդից խնդրեց իրաւունք տալ եկեղեցական դոմարից, որը դուրսացած է նրա Արաբլու անուանված հողը ծախելուց, շինել մի նոր ուսումնարան. ասում են առաջնորդը խնդրագիրը յարգելով հեռագրել է հոգաբարձուներ ընտրել, նախահաշիւ և պլան կազմել և առաջարկել հաստատութեան համար: Այդ մասին, ինչպէս լսում ենք, մի քանի մարդկանցից ժողով է կազմվել յաջորդի մօտ: Ընտրվել են հոգաբարձուներ պ. պ. Ն. Ա. Տէր-Ներսէսեանց, Ա. Վանեանց, Մ. Օհանեանց և Յ. Փաթալեանց. բայց որովհետև հեռագրում յիշած է մանրամասն հարցրել փոտոտարով, այդ հիման վրա ժողովը միւս մասերի վերաբերմամբ որոշ եզրակացութեան չը հասաւ, մի որ և ից վճիռ ստանալուն պէս կը հարգուի հարցասէրներին: Յանկանալով բարի աջողութիւն հասարակութեանը իր մտադրութիւնը առաջ տանելու համար, կը վստահանամ մի խորհուրդ միայն տալ ուսումնարանի արտաքին բարեկարգութեան վրա մտածելուց յետոյ, փոքր ինչ էլ ուշադրութիւն դարձնեն նրա ներքին բարեկարգութեան վրա:

Շ.

ՆԱՄԱԿ ՍՈՒՆԱՐԱՅԻՑ

6 ապրիլի

Չլարի սանձանում առաջին հարկաւորութեան մթերքները օրից օր թանգանում են չը նայելով այն հանգամանքներին, որ կենսական պիտոյքները այս կողմերում ամեն տեղից առատ և էժան Չլարում կարելի էր ձեռք բերել և չըլարեցիք ամեն տարի մեծ քանակութեամբ դուրս էին տանում վաճառելու դէպի Ալէքսանդրապոլ, Ախալքալաք, Ախալցխայ և այլն ցորեն, գարի, ալիւր, իւղ և հօտերով ոչխարներ և նախիրներով կովեր ու եզներ, այժմ իրանք են գնում դրսից անասուններ խիստ բարձր գնով: Այն եղիւրը որ վաճառում էին իրանք հատը 20 ռ., այժմ զընում են դրսից հատը 70 ռ.: Գոմէշները, որոնց վաճառում էին զոյգը 80 կամ 100 ռ., գնում են 250 ռ., կովերը որ վաճառում էին հատը 15 ռ., իրանք գնում են 40 ռուբլով: Իսկ ցորեն և գարի սանձանից դուրս տանելը և վաճառելը արդիւված է, միայն զորքերի համար կարելի է գնել սանձանի մէջ: Չլարի սանձանում ցորենի պուզը այժմ ծախվում է 1 ռ. 60 կօպէկով, գարին

պուրը 1 ր. 90 կ., իւրի պուրը 15 ր., 10 ձուռն 25 կ., վառելիքայտը մի տայլ 10 ր., աթարի 100-ը 3 րուր: Հաստատ աղբիւրներից քաղելիցիք հետեւալ հետաքրքրի տեղեկութիւնները:

Անցեալ տարւոյ ապրիլ ամսից մինչև դեկտեմբեր ամիսը Չլորեցիք ծախել են ուսուց կառավարութեան վրա գործերի հարկաւորութեան համար 1370 պուր ալիւր, 3000 պուր ցորեն, 1673 պուր գարի, 12000 պուր խոտ, 8000 պուր կրթ-դարման, 3150 սօմար դարի:

Արաքսայի բնակիչ Պալաւկաթեան գիւղի մօտ գտնուած ժամանակ տարել և ծախել են 50 սամէն փայտ և 600 սամէն ածխ:

Բացի սրանից որ վերոյիշեալները բնակիչները իրանք ծախել են, կառավարութեանը ինքն ևս գնել է նրանցից 7285 պուր ցորեն, 508 պ. գարի առանձին կերպով:

Չորեքը Չլորեցիք սահմանից զէպի՞ Արդահան անցնելու ժամանակ ճանապարհի մօտ եղած ցանքերին փաս է եղած միայն 7600 րուր որ ստանալու են փասվածները: Չլորեցի սահմանը ուսուց կառավարութեանը տուել է անցեալ աշնանը իր միջերկրից տասանորդ ստված հարկ ցորեն 10319 պուր, գարի 8235 պուր, խոտ 8440 պուր:

Վերոյիշեալ թերից կարելի է եղակացնել թէ Չլորեցիք իրանց ծոյլ աշխատանքով և սակաւ բնակիչներով այնու ամենայնիւ որքան մեծ արդիւնք են ստանում հողից որ դեռ բաւակաւնաչափ միջերկր ևս ունեն թէ ցանելու և թէ ծախելու համար: Չլորեցի տաճիկ ազգաբնակիչները համեմատելով Ղարսի, Շուրաբի, Արդահանի և այլ սահմանների տաճիկների հետ, հասկացողութեան, ճարտարութեան, քաղաքացիական և այլ բնութեան թիւնների կողմից շատ գերազանց են նրանցից: Սրանք մեծ մասամբ գաղթած են այս տեղ Ռուսաստանի, Ղազարի և Պօղջալուի կողմերից և կոչվում են թարաքեամաներ:

Մարդարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. ՊԵՏԵՐՆՈՒԹԻՅԷ լրագրիները հարդրում են ապրիլի 7-ից որ թագաւոր Վասյուրը, ներքին գործերի մինիստրի ներկայացրած գիւտցո մի հիման վրա, ի նկատի ունենալով ուսու «СЪВЕРНІЙ ВѢСТНИКЪ» լրագրի փաստկար ուղղութիւնը, հրամայեց բարձրովն զաղաքացիները այդ լրագրի հրատարակութիւնը:

Ռուս լրագրիները հարդրում են որ արգելված «СЪВ. ВѢСТН.» լրագրի խմբագրիները գիտաւորութիւն ունեն այժմ հրատարակել մի նոր ամենօրեայ լրագիր «Невскій ВѢстникъ» անուամբ:

ՐՕՍՏՈՎ (Գօնի վրա) քաղաքից հարդրում են հետեւեալը: Մարտի 27-ին գիշերով հայտ Ղարսի գիւղում, որ գտնուում է քաղաքից 18 վերստ հեռու, կոտորել են Բայալ ազգանունով մի ամբողջ հայոց ընտանիք, որ բաղկացած էր ինչո՞ հոգուց: Սպանութիւնը կատարել են նշանաւոր հնարագիտութեամբ և բարբարոսութեամբ երկու անցայտ մարդիկ: Ասում են որ գերի թիւրքերն են յանցաւորները: Գործը այսպէս էր. ընտանիքը որ բաղկացած էր երկու տարեկան երեխայից, մօրից, հորից, ինչո՞ տարեկան, տասն և մի տարեկան և ինն տարեկան աղջիկներից՝ մարտի 27-ին բոլորն էլ քնած էին սան յատակի վրա, ամենից փոքր երեխան քնած էր օրօրոցի մէջ: Այդ ժամանակ նրանց խրճիթը մասն մարդասպանները: Ամենից առաջ նրանք սպանեցին օրօրոցի երեխային, յետո՞ մօրը, հորը և երկու աղջիկներին: Հիւրիով սպանելով ընտանիքի անդամներին, նրանք սպանութիւնը վերցնում էին վերամակները և գցում էին սենեակի հակառակ ծայրը և դրանցով ծածկելով 9 տարեկան աղջկան, չը նկատեցին նրան: Այս դէպքը ազատեց երեխայի կեանքը, որը չէր քնած և հասկանալով վտանգը, լուռ էր մինչև անգամ այն ժամանակ երբ նրա վրա ման էին գալիս մարդասպանները: Երբ այդ սարսափելի սպանութիւնը վերջացած էր և մարդասպանները դուրս եկան, փոքրիկ վկան վազեց հարեանների մօտ: Նրա ասելով մարդասպանները ոչ հայերէն և ոչ ուսուերէն էին խօսում, այլ մի անծանօթ լեզուով: Մարդասպանութիւնը կողպտելու նպատակով էր եղել: Բըժիկի քննութիւնից երեսց, որ ընտանիքի բոլոր անդամները սուր զէնքով են սպանված, երեկ

խանչալով: Երկու տարեկան երեխայի սիրտը միջով ծակված էր, մայրը մի և նոյն վէրքն ունէր, հայրը մէջքի վրա ունէր վերքը և սիրտը փասված էր, 5 տարեկան երեխան սրտի վրա ունէր վերքը և դուրսը ջարդված էր, վերջուպէս 11 տարեկան երեխայի գլուխը բոլորովն ջարդված էր: Այդ տեսակ նշանաւոր բարբարոսութեամբ կատարված սպանութեամբ չը բաւ կանանալով մարդասպան աւազակները ճիւղիկն մօր փորը, հանեցին երկու ամսական պտուղը և տարան իրանց հետ: Եթէ ճշմարիտ յայտնի որ մարդասպանները գերի թիւրքեր են, այն ժամանակ թող թիւրքասերները այդ սարսափելի անցքից «եղբակցներն թէ ինչ պէտք է լինի հայերի դրութիւնը թիւրքալայտ, երբ Ռուսաստանի մէջ գերի ընկած թիւրքերն էլ այդպէս են վերաբերվում գէպի հայերը:

Անդրլուկասի այլ և այլ տեղերից մեզ հարդրում են որ գրեթէ ամբողջ ապրիլ շաբաթ մեր երկրի շատ տեղերում սաստիկ անձրևային էր, որ մեծ շոյս է տալիս մեր երկրագործ դասին, թէ այս տարի հացի և խոտի մեծ առատութիւն կը լինի:

Ապրիլի 15-ին գիշերվոյ ժամը 12 1/2-ին հրդեհ յայտնուեցաւ թիւթի Սօլդատովի բազար առանձնաված փողոցի մի տան խանութի մէջ: Շուտով բոցը պատեց ամբողջ տունը, Բաղաւորապէս եղանակը շատ հանդարտ էր և հարեան տըները անվնաս մնացին:

Վ. Ա. Գ. Ի. Կ. Վ. Ա. Գ. Ի. 3 մեզ հարդրում են, որ այնտեղ ապրիլի 8-ին կարանաւորը են աւազակ ճատօին:

ԲԱ. Գ. ՈՒ. Ի. 3 մեզ գրում են, որ մի քանի երկրատարներ Մարդարեանկան ՐՅԷ. դահլիճում գրականական երկից են տուել յօդուտ Շամախու թեմի ազգային դպրոցներին:

ԲԱ. Գ. ՈՒ. Ի. 3 մեզ հարդրում են, որ ապրիլի 3-ին Բայալով հրուանդան տանող ճանապարհը բարձրացել է և տեղ տեղ ձեղքեր է կազմել: Այդ ճանապարհը, որ առաջ շատ բարձր չէր, այժմ մօտ երեք սամէն բարձրացել է: Ճանապարհի մի կողմը սար է, որի վրա այնպիսի ձեղքեր են կազմվել, որ նայելու ժամանակ յատակը հալու է երևում: Այսպիսի երևոյթ պատահել է 1875 թ. յին, Նահանգապետը ուսումնական մասնաժողով է նշանակել այդ երևոյթի պատճառները հետազօտելու համար: Անձրեք շարունակ դալիս է:

Գ. Ա. Ն. Գ. Ա. Ի. 3 մեզ հարդրում են, որ միջերկրները այնտեղ ծախվում են հետեւալ գներով: Ալիւրի պուրը արժէ 1 ր., բրինձը 2—2 ր. 50 կ., կարագ իւրը 6 ր., պանիր 1 ր., 80 կ., Նուրմայ ձէթը 9 ր., սոյախի միսը ֆունտը 10 կ., ձուռն հատը մի կօպէկ:

Հինգըսթի ապրիլի 20-ին Ներսիսեան դպրոցի աշակերտները հին պարոցի դահլիճում ներկայացրին «Սամէլ» չորս գործողութեամբ ողբերգութիւնը: Հասարակութիւնը հրաւիրված էր: Ներկայացումը բաւական աջող անցաւ: Հասարակութիւնը լցրել էր աճազին դահլիճը: Հայերը շատ են սիրում յաճախել թատրօն, լրագիր կարդալ, երեխաներին ուսումնարան տալ և այլն, միայն այդ բոլորը ձրի լինի: Մենք հաստատեցանք ենք, որ եթէ ապրիլի 20-ի ներկայացումը փողով լինէր, ներկայ եղած հասարակութեան քառորդ մասն էլ չէր գայ թատրօն:

«Балканс. Изв.» լրագիրը հարդրում է որ Բագուի մօտ, Բաղախանի ճանապարհի վրա աւազակները սպանել են նաթի գործարաններից մէկի շիկացի վերակացուին: Սպանելուց մի շաբաթ առաջ վերակացուի վրա դարձեալ յարձակվել էին, բայց նա կարողացել էր իրան պաշտպանել, մինչև անգամ վիրաւորել էր չարագործներից մէկին: Այս անգամ գնտակը ուղիւ նրա սրտին էր դիպել:

Մի և նոյն լրագիրը հարդրում է, որ մի քանի շաբաթ առաջ պ. Միրզոբի բանտից մէկը ընկել էր նաթի մնացորդների պահեստի մէջ և խեղդվել էր:

Է. Գ. Մ. Ա. Ի. 3 մեզ գրում են, որ ձեպահեանի գործը քննող մասնաժողովը նրան մեղաւոր է գտել: ձեպահեանի վարչութիւնը արձակել է ու-

սուցիչ ձեպահեանին, որին ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, աշակերտները ձեռն էին անբարոյականութեան համար: ձեպահեանը պրզէն գնաց կ. Պօլիս: Բարի ճանապարհ թէ այդ պարտին և թէ միս տեղերից եկած արեւելագէտներին:

Կ. Ա. Ն. Գ. Ա. Ի. 3 մի քանի գիւղերից մեզ հարդրում են, որ խաղաղի օրթերը այս տարի շատ լաւ են: Տեղացիք յոյս ունեն, որ առատ գինի կը ստանան: Անդադար եկած անձրևներից յետոյ արտերը բաւական բարձրացել են և լաւ հունձ են խոտաւնում:

Գ. Ա. Ն. Գ. Ա. Ի. 3 մեզ հարդրում են, որ անձրևներից յետոյ փողոցները ծածկվել են անանցանելի ցեխով: Այ ոք չէ հոգում քաղաքի մաքրութեան վրա: Ծաղիկ հիւանդութիւնը չէ վերջանում և անխնայ հնձում է երեխաներին:

Սերբուս թիւթի ՍՈՒՌՄ մի մանկահասակ կին ընկաւ կուր գետը և խեղդվեց, Ասում են, որ ինքնասպանութեան պատճառը ընտանեկան բռնաւորութիւնն է եղել:

Թիւթի ՍՈՒՍ անեղիկացի մասնաժողովը հոգում է մաքուր պահել միայն մի քանի աչքի ընկող փողոցները, միւս փողոցները շատ կեղտոտ են, Ածուխի մէջդանի մօտ այնպիսի կեղտոտ ցեխ է դրված, որ քիթը ծածկած պէտք է անցնել: Էլ չենք խօսում Հաւաբարի փողոցների վրա:

Ասում են, որ թիւթի ՍՈՒՍ Հաւաբար մասում տիֆով հիւանդացած ընտանիքներից բոլոր զըրացիները փախում են և հիւանդներին վիճակի կամքին են թողնում: Այդպեղ կանչված բժիշկներն էլ հրաժարվում են այցելել հիւանդներին:

ՇՈՒՍԱՆԻՐԻՅ մեզ գրում են, որ բնակիչները շատ դժգոհ են բերքերի փոքր քանակութեամբ ցանելու համար: Նոքա վախենում էին, որ անցեալ տարիների պէս երաշտ տարի կը լինի: Արտերը շատ լաւ են: Տաս տարի առաջ ցամաքած աղբիւրները այժմ սկսել են հոսել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԱԼԻՍԹԻՐԻՒԹԻ ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

(Շարունակութիւն և վերջ)

«1871 թ. ին Վօնդում հաւաքված կօնիքերից խոսելով մեծ պետութիւնների հաւատարմատարները, որոնց մէջ է նաև Ռուսաստանը, ընդունած են իբրև հիմնական սկզբունք թէ ոչ մի տէրութիւն չէ կարող ազատ համարել իրան մի գաշնազրի գրած պարտաւորութիւններից, կամ փոփոխել նրա պայմանները, առանց հաւանութեան գաշնակից տէրութիւնների և առանց բարեկամօրէն կարգադրելու նրանց հետ:

«Նոր գաշնազրի գործադրութիւնը ամենաճանր հեռականքներ կունենայ եւրօպայի հարաւարեւելեան ազգերի համար: Նոր Բօլզարիայի համար գրված պայմաններով պաւստական մի հզոր տէրութիւն կը կանգնի Ռուսաստանի պաշտպանութեան և կօնտրօլի տակ: Այդ նոր տէրութիւնը կունենայ Սև ծովը և Արևիպիւրգոսի (Նգէեան ծով) ամբերի վրա շատ մեծ նաւահանութիւններ որոնք այդ ծովերի վրա թէ առեւարական և թէ քաղաքական յարաբերութիւնների մասին մի գերազանց ազդեցութիւն կը տան նրան: Այդ տէրութիւնը կը հաստատվի այնպիսի պայմաններով որ տիրող պաւստական մեծամասնութեան մէջ կը խառնվի բաւական բազմաթիւ մի ժողովուրդ որ յունական ցեղից է, որի համակրութիւնը գէպի յունականութիւնն է, որ վերջով զգացումներով տեսնում է թէ կուլ է գնում մի հասարակութեան որ օտար է իրան, ոչ միայն ազգայնութեան նկատմամբ, այլ և իր քաղաքական ձգտումների և իր կրօնական հաւատալիքների տեսակետից նայելով: Այն պայմանները որոնք համեմատ բոլորական

նոր տէրութիւնը կենթարկվել մի գլխաւորի իշխանութեան, որին գործնական կեանք նախելով, Ռուսաստանն է որ կընարէ, նրա վարչութիւնը որ մի ուսու կօմիսարի ձեռքով կը կազմակերպվի, մի ուսական բանակի կօնտրօլի տակ գործադրված նրա օրէնքների նախնական ազդեցութիւնները, այս ամենը բաւականին ջոյց են տալի թէ այդ նոր տէրութիւնը ինչ քաղաքական սխտեմա կունենայ այնուհետև: Նրա ազդեցութիւնը մինչև անգամ իր սահմաններից աւելի հեռու է տարածվում: Թէպէտայի և Նպիրոսի ժողովրդներին վարչական լաւագոյն օրէնքներ խօստացող պայմանի հետ գրված է նաև թէ նոր օրէնքները կը խմբագրվեն ուսու կառավարութեան կօնտրօլի տակ: Այդ պայմանին հետեւում են ուսու եկեղեցականների պաշտպանութեան համար գրված պայմանները որոնք նմանում են Կայսրաջայի դաշնագրի պայմաններին որ ջնջվեցան 1856-ին: Այդպիսի պայմաններին չէ կարելի որ համակրեն ոչ Յունաստանի կառավարութիւնը և ոչ մեծ տէրութիւնները որոնք համար օսմանեան կայսերութեան բոլոր մասերը մի ընդհանրական շահ են ներկայացնում: Գաշնազրի այդ մասի հետեւեալը կը լինի ուսուց կայսերութեան իշխանութիւնը աւելացնել այն երկիրներում և ծովերներում ուր ազդեցութիւն ունէ յոյն ժողովուրդը: Այդ կը փնտսէ ոչ միայն յունաց ազգին, այլև ամեն ազգերին որոնք շահեր ունեն Միջերկրական ծովի արեւելեան կողմում:

«Շողային այնպիսի բաժանումներ եղած են կ. Պօլիս և Բ. Գրան կառավարութեան տակ գտնված յունաբնակ նահանգների, Ալեանիայի և սլաւօնական նահանգների մէջ որ այդ նահանգների կառավարելը շատ դժուար կը լինի Բ. Գրան համար և մինչև անգամ կը շփոթեցնէ նրան: Այ միայն Բ. Գուրը կը զգի իր քաղաքական ազդեցութիւնից այդ նահանգների վրա, այլ և նրանց բնակիչները անիշխանութեան ծանր վտանգին կենթարկվեն:

«Այդպիսի հետեւանքներին կը հասնեն դաշնագրի և այլ մասերը, օսմանեան կայսերութեան այլ սահմանների վրա: Բեսարաբիայի բանի առնվելը Բուկինիայից, Բօլզարիայի տարածվելը մինչև Սև ծովը ամբերի վրա ուր մահմետականներ և յոյներ են բնակվում և Բաթումի կարևոր նաւահագստի առեւտուրը այն հետեւանքի կը հասնեն որ ուսուց կառավարութեան կամքը կը տիրապետէ Սև ծովը մերձակայ բոլոր տեղերում: Հայաստանի ամրոցների ստանալը պատճառ կը լինի որ այդ նահանգի ժողովուրդը կենթարկվի այն ամրոցներին տէր եղող իշխանութեան անմիջական ազդեցութեանը: մինչև որ այն կողմեր տարածված եւրօպական վաճառականութիւնը՝ որ այժմ Տրապիզոնից ճանապարհ ունի դէպի Պարսկաստան, Քուրդիստանում այդ քաղաքների յանձնվելուց յետոյ երկիւղ կայ որ ուսու կառավարութեան հաւանքի համեմատ զաւարի անանցանելի արգելքներով որոնք դնում են նրա վաճառականական սխտեմայի օրէնքները:

«Պատերազմական տուգանքը այնչափ շատ է որոշված որ յայտնապէս թիւրքիայի կարողութիւնից վեր է, մինչև անգամ և թէ հաշու մէջ չը գնենք նաև այն կետը թէ թիւրքիայի եկամուտների աւելումը ապահովութեան տրված է այլ պարտատէրերի պահանջների համար: Վաճառան կերպը անորոշ խօսքերով թողված է Ռուսաստանի և Բ. Գրան մէջ յետոյ բանակցութիւններով որոշելու: Այդ պարագի վճարելը կարելի է որ անմիջապէս պահանջվի, կամ կարելի է որ անվճար թողվի որպէս զե իբրև մի ճնշող ճանրութիւն կախված մնայ Գրան անկախութեանը վրա: Կարելի է նաև որ այդ վճարումը լինի աւելի արժէքաւոր հողեր տալով, կամ թէ կարելի է որ պատճառ լինի մասնաւոր պայմաններին որոնք թիւրքիայի

քաղաքականութիւնը ենթարկին Ռուսաստանի քաղաքականութեան ամեն բանի մէջ:

«Կարելի է որ ուրիշները մասնաւոր աւարկութիւններ էլ ունենան այդ գանազան պայմաններէ դէմ և կարելի է որ փաստեր ներկայացնեն հաստատելու համար թէ այդ պայմանները եւրոպական և ասիական Փիւրքիայի նահանգներում մշտական խաղաղութիւն հաստատելու յարմար չեն: Բայց նրանց այդ մասնաւոր և առանձին աշխատութիւնը, թէ իրաւացի լինի և թէ անիրաւ, դաշնագրութիւններին ստորագրող տերութիւններին միտաձման գլխաւոր աւարկայ չէ: Բայց այն հետեանքները որ կուսնենան յոյն ժողովրդի և ծովային զորութեան հաւասարակշռութեանը վրա, այդ պայմաններին գլխաւոր հետեանքը կը լինի և Պոլսի կառավարութեան քաղաքական անկախութիւնը ցածրացնել մինչև հպատակութեան աստիճան: Այդ կառավարութեան իրաւասութիւնը տարածվում է աշխարհագրական այնպիսի դիրքերի վրա որոնց հետ խորը կապված են Սեծ-Բրիտանիայի շահերը Օսմանեան կառավարութիւնը իշխանութիւն ունի բանալու և փակելու այն նեղուցները որոնք ձևացնում են ազգերի բնական մեծ ձանապարհը եզեհան ծովի և Սև ծովի մէջ տեղը նա տիրապետում է Պարսկային ծոցից վերև Արևելքի ծովափերի վրա և Սուէզի ջրանցքի մտտականներում:

«Անդրկական կառավարութիւնը չէ կարող չը յուզվել երբ տեսնում է թէ այդպիսի իրաւասութիւն ունեցող մի կառավարութիւն սեղմվում է մի աւելի մեծ տերութեան քաղաքականութեան յառաջնութեան խումբերի մէջտեղ այնպէս որ գրեթէ անկարելի կը լինի նրա անկախութիւնը, մինչև անգամ նրա գոյութիւնը: Այս հետեանքները դաշնագրի այս ինչ կամ այն ինչ յօդուածից չեն բխում այնպիսի որչափ նրա անբողոքութիւնը: Այն վիճաբանութիւնը որին կոչուեցանք ներկայացող տերութիւններից մէկը սահման դրած կը լինի թէ այս ինչ յօդուածների վրա միայն պէտք է լինի, երևակայական մի դարման կը լինի այն վտանգներին որոնք սպառնում են Անդրկայի շահերին և Եւրոպայի խաղաղութեան:

«Թագուհու կառավարութեան ունեցած նպատակը և Պոլսի կոնֆլիկտները այն էր որ օսմանեան կառավարութեան գործադրել տայ թիւրքական վերանորոգութիւնները, զեղծումները ջնջվին և այդպէս կոչուելու թիւրք պահպանվել մինչև որ կարողանայ այլ ևս հարկաւորութիւն չունենալ երաշխաւորութեան և պաշտպանութեան ծայրին է թէ այդ հետեանքի հասնել կարելի էր միայն կայսերութեան գանազան ժողովրդներին բաւականին գոհացուցել մի գրութիւն տալով, որպէս զև իբրև օրինաւոր հպատակներ սուլթանի, հայրենասիրութիւն և մինչև անգամ պարսաւորութիւն համարելին պաշտպանել թիւրքաց կայսերութիւնը: Նոյն իսկ օսմանեան կառավարութեան այս մասին արած ձախորդ ընդդիմութիւնը անաջող թողնեց այդ քաղաքականութիւնը և այս գրութեան մէջ որին առաջնորդեցին մեզ այժմեան գեպերը, էլ չէ կարելի մի և նոյն արդիւնքները ձեռք բերել մի և նոյն միջոցներով: Ի հարկէ մեծ փոփոխութիւններ պէտք է լինեն այն դաշնագրութիւններին մէջ որոնք մինչև այժմ կառավարելին արեւելքի կայսերութիւնը: Բայց մեր տերութեան ունեցած նպատակն այն է որ մի լաւ վարչութիւն, ապահովված խաղաղութիւն և ազատութիւն ունենան կոչուելու թիւրք ժողովրդները որոնք մինչև այսօր զրկված էին այդպիսի բարիքներից:

«Բայց ոչ այն շահերը որոնք թագուհու կառավարութիւնը պարտաւոր է պաշտպանել և ոչ այն նահանգներին բարեկեցութիւնը որոնցով զբաղվում է դաշնագրերը, չէ կարելի որ պաշտպանվին մի այնպիսի կոնգրեսում:

որի խորհրդակցութիւնները սահմանափակվում են զգուշութիւններով, որոնց իշխան Գորչակովը ցոյց է տալի իր հարգարած վերջին գրութեան մէջ:

«Ձեր Ասեմբլեան կը կարգայ այս գրութիւնը արտաքին գործերի մինիստրին և նրան կը տայ սրա մի օրինակը: Մարտի 1878»

ՀԱՅՈՑ ԻՆՊԻՐՈ ԱՆԿԻԱՅՈՒՄ

«Հայկական խնդիրը Լոնտոնի մէջ այժմ բաւական շարժում գտաւ: Քաղաքագետ անձանց և Վերլուծութեան մէջ հայ պղծի և Հայաստանի ապաւնի գրութեան վերա կը խօսին շարունակաւ: Այս յուզումն առաւել ևս զբաղի եղաւ, երբ Ռուսիա՝ խաղաղութեան պայմաններէն միով Հայաստանի մէկ մասն իրեն սեփականել որոշեց: Շատ քաղաքագետ անձինք՝ Ռուսիոյ գէպի և Եւրոպայի հովան յառաջանալուն մէջ Հնդկաստանի համար մեծ վտանգ կընդունարին, թէպէտ և Քաղաքացի արտաքին գործոց պաշտօնեայ լորտ Տերպլի՝ որպէս նաև այլք՝ այս կարծիքէն չեն:

«Արագիւրը հայոց անցեալին վերա կը դըրեն, և նոցա այսչափ տարիներէ վեր անհնարին տառապանաց և հալածանաց դէմ մարտաւարձ հայրենիքէ հեռի տարազրութեան մէջ՝ նախանձանիւղի յամառութեամբ ցարդ իրենց ազգութիւնը, կրօնքն և լեզուն անտարբեր և անթերի պահելն կը ջատագովին: Եւրոպա և ասիոյ թերթն իւր մարտի ամսագրոյն մէջ հայ թագաւորի և վարդապետի ընտիր պատկերներ հրատարակած էր, և հայոց պատմութեան համառօտ բովանդակութիւն մի ընկալով՝ նոցա արժանիքէն առաւել գովեստներ բրած էր առատագէս նոցա ինչ ինչ յատկութիւններն յիշատակելով:

«Մարտ ամսոյն սկիզբը նաև մի փոքրիկ տետրակ հրատարակուեցաւ Լոնտոնի մէջ, «Երեսպահանգործի և Հայք տիրապետի Այս տետրը, որ խաղաղասիրական ոգով գրուած՝ հայոց անցեալ և ներկային մէջ կրած տառապանքները կը նկարագրէ, և պուրջաց ու հայոց մինչև այժմ բրած յառաջդիմութեանց և նոցա ընկերական կենաց բարդատութիւնը կընէ և այլն, Կարէպի իշխանին, Քաղաքացի նախարարաց, լորտերուն բարլամէնթի անդամներուն, եկեղեցականաց երեւելի դասուն, Վերլուծութեան և գանազան ընկերութիւններու ուղղուեցաւ, և բարի ընդունելութիւն գտաւ իւր չափաւորութեանը համար: Ուրիշքութիւնի եպիսկոպոսը մասնաւոր նամակաւ իւր ջերմ համակրութիւնը կը յայտնէ հայ ազգին համար, զայնին ընտիր և ազնիւ ցեղ մի են, խիստ ուրախ պիտի լինիմ, կրտս, գանազան անկախ և երջանիկ տեսնելով օր մի: Լիտոն երեւելի եկեղեցականն ալ կը գրէ թէ իւր բոլոր համակրութիւնն հայոց հետ է, և բաւականութեամբ ինչն անոնց ապաւնի երջանկութեան համար: Արիւղը դուքսն և ուրիշ երեւելի անգլիացիներ մասնաւոր նամակներով հայոց համար իրենց համակրութիւնը կարտայայտեն:

«Լոնտոնի և Մանչեսթրի հայերն այս գիտար պարագայներու մէջ անտարբեր կեցած չեն: Նոքա՝ որ Անգլիոյ պէս ազատ և քաղաքակիրթ երկրի մէջ բնակուելու բարեբաղութիւնն ունին, յիշելով Հայաստանի տարաբաղ հայերը կը նկատին այնպիսի միջոցներ ձեռք առնուել որով առաջինայ դեսպանատնովն մէջ հայկական խնդիրն ևս մեծ տերութեանց առջև ներկայանայ, և Հայաստանի համար արդարեւ բարի կառավարութիւն մի ձեռք բերուի: Բայց ոչ միայն հայերն, այլ և բարեւեր անգլիացիք նոցա քաջալեր և ջատագով կը կանգնին, և ի միտսն կը գործեն:

«Մարտի Պրայս հայասեր անգլիացին՝ որ

Հայաստան երկար ճամբորդութիւն բրած, և մինչև իսկ Արարատոյ գագաթն ելած է, մեծ համակրութիւն և սէր կարտայայտէ հայոց համար, և այժմեան Արևելեան խնդրոյն առթիւ՝ նոցա օրտակար լինելու նպատակաւ, ամսոյ 19-ին իւր տունն հրաւիրեց մի թիւ իւր անգլիացի բարեկամներէն, ինչպէս նաև Լոնտոն և Մանչեսթր բնակող մեր համագլխներէն, հայկական շահերը պաշտպանելու հարկաւոր եղած միջոցներուն վրա խորհրդակցելու համար:

«Այս ժողովին ներկայ էին, ինչպէս Քայմը և ուրիշ լրագիրներ հրատարակեցին, Պաթհի մարքիզը, Մաթր Աշլը, Սըր Քէննուէյ, Սըր Հէնրի Վէրնէ, Սըր ձէորձ Երնի, Մաթր Նորմէն Կրօմլըր և այլն, ընդամենը 20 հոգիի չափ, որոցմէ շատերը բարլամէնթի անդամ են, ինչպէս նաև ինն հայազգիք, որոցմէ մին Դարեժցի էր:

«Առաջադրեալ խնդիրներն հետեւեալքն էին: 1. Թէ Հայաստանի արդի հայ բնակչաց թիւն որչափ է բարդատութեամբ Մօսկով (Պալամ) ժողովրդեան հետ:

2. Հայ ժողովրդեան գանազանաց և դրժագութեանց ծրագիր մի ներկայացնել:

3. Թէ ինչ միջոցներ հարկաւոր են անոնց դարման տանելու համար:

4. Թէ ինքնօրինութիւնն հնար է Հայաստանի արդի գրութեան նկատմամբ:

«Սեղանի մի վերա Հայաստանի աշխարհագրական ընդարձակ տախտակ մի դրուած էր, և ամեն ոք նորա դիրքը կը զննէր:

«Մարտի Պրայս համառօտ ատենախօսութեամբ մը բացատրեց հանդիսականաց՝ սոյն ժողովոյն նպատակը, որով կուզէր առիթ ընծայել հրաւիրեալ հայոց՝ իրենց երկրին արդի վիճակին և նորա պիտոյից վերա իրենց զաղափարներն յայտնելու: Անմիջապէս ետքը, մեր ազգակիցք իրենց պատրաստած գրութիւններն հանդիսականաց առջև ընթերցան: Այս գրութեանց կարճառօտ բովանդակութիւնը հետեւեալն է:

«Թէ հայերն այսչափ դարբեր է վեր Հայաստանի մէջ կը տառապին ոչ միայն բարբարոս քրիստեան կողմանէ կրած զրկանքներով, հասարակ տեղական կառավարութեան կողմանէ բաւական պաշտպանութիւն չը գտնելով: Թէ հայերը բուն Հայաստանի մէջ խիստ թուաւոր են, սակայն ի՞նչ նոցա թիւը վերջին ժամանակներս համեմատաբար նուազացած է, սորա պատճառն իրենց շարունակ եղած զրկանաց չը կրնալով տանիլ, հայրենի հողէն խումբ խումբ տարագրիլն է: Թէ ժամանակն հասեալ է, պէտք է Եւրոպա՝ մանաւանդ Անգլիա նկատողութեան առնու հայոց վերջերքը, որոնց յանցանքն՝ ըստ օմնոյ՝ ուրիշ բան չէ, ի՞նչ ոչ խաղաղատէր լինիլ և Սուլթանին կառավարութեան դէմ չապատմիլն: Թէ հայերն ինքնօրինութիւն կուզեն Հայաստանի համար, մասնաւոր որ հայոց և թրքաց մէջ մասնաւոր դառն ատելութիւն մի չը կայ, և թէ թուրքերն հայոց պէս մի և նոյն ատելութեամբ կատեն զքրիտոնն, և այլն և այլն:

«Անգլիացի հանդիսականաց կողմանէ տան և մէկ անձինք հետզհետէ խօսեցան: Սըր Վէրնէյ, Մոռապա Աշլը, Պաթհի մարքիզը, և այլն, հայոց համար իրենց ջերմ համակրութիւն յայտնելով՝ օմնոյք ինքնօրինութիւնը յարմար կը գտնէին, ուրիշներ բաւական զգուշարութիւններ կը նշմարէին այսպիսի կառավարութեան համար Հայաստանի արդի գրութեան նկատմամբ, օմնոյք ալ Լիբանանու կառավարութեան նման կառավարութիւն մի աւելի յարմար կը գտնէին այժմ:

«Այսպէս բաւական խօսելէ և գաղափարներ արտայայտելէ զինի, առաջարկուեցաւ մի մասնաժողով կազմել՝ բարդակցեալ բոլոր ներկայ գտնուող անգլիացի և հայազգի հանդիսականներէ, և որոշուեցաւ լորտ Տերպլի պատգամաւորութիւն մի ուղղել և յիշատակարան մի ներկայացնել խնդրելով որ առա-

ջիկայ դեսպանատնովն մէջ հայոց խնդիրն իսկ նկատողութեան առնուն Սեծին Բրիտանիոյ պաշտպանութեան ներքև: Սըր Քէննուէյ մարդասիրաբար յանձն առաւ լորտ Տերպլի գրել պատգամաւորութեան մասին, և Մաթր Պրայս մասնաժողովոյ ատենադպիր ընտրուեցաւ: Սըր Վէրնէյ իւր բոլոր համակրութիւնն յայտնելու համար՝ ինքրեց և առաջարկեց որ հետեւեալ ժողովն իւր տունը տեղի ունենայ:

«Այսպէս վերջացաւ այս ժողովն ի մեծ ուրախութիւն հայ հանդիսականաց, որոնք բաւական բառ չէին գտնել իրենց զգացած ուրախութիւնն և շորհակալքն յայտնելու այս ազնիւ և վեհանձն ազգին զաւակներուն, որոնք հայ անուան ցոյց տուած կարեկցութեան և սիրոյն համար համայն հայոց երտապաղտութեան արժանի են:

«Ինչպէս որ անգլիական լրագրաց մէջ հրատարակուեցաւ արդէն, լորտ Տերպլի հաւանեցաւ հայ պատգամաւորութիւնն ընդունիլ սակայն օր մի չորոշուեցաւ տակաւին, քանզի յայտնի իսկ չէ այժմ թէ դեսպանատնովն տեղի պիտի ունենայ թէ ոչ:

(Մատիս)

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

ՆԻՒԵՐՈՎ, 18/30 ապրիլի: Ստուովեստ-Հարբար Մեն նահանգում եկաւ համբուրգեան շոքեան օժիւրիստ, որ ինչպէս պատմում է կապիտան Բագէնհաուզին, վարձված էր ռուսաց կառավարութեան: Շոքեանը Ֆինլանդիայի նաւահանգստից վերցրեց 600 ձանապարհորդ նաւի վերի յարկում և 63 մարդ կարիներին (տաննախնամակներին) մէջ: Ապրիլի 20-ին Բալտեան նաւահանգստից դուրս գալով օժիւրիստ շոքեանը անցաւ Շտաշանդիայից դէպի հիւսիս Կապիտան Բագէնհաուզին կարիներին ձանապարհորդներից մէկի իշխանութեան տակ լինելով, հրաման ստացաւ ուղևորվել դէպի Ստուովեստ-Հարբար: Նրբ հասան այդտեղ, շոքեանից ոչ ոք չէ իջել բացի կապիտանից և այն պարոնից, որի իշխանութեան տակ էր նա: Այս անձը, ինչպէս երևում էր, ռուսաց նաւատորմի օժիւրից էր: Ոչ ոք իրաւունք չունէր շոքեանից դուրս գալ: Շոքեանով ձանապարհորդները պատերազմական նաւի կանոնաւոր զօրք են, որ բաղկացած է 69 օժիւրիներից և ռուսաց կայսերական նաւատորմի 600 նաւատիներից, որոնց հրամանատարն է կան Գրի-նենբերգ: Նա ուղարկեց Ս. Պետերբուրգ նշանադիր դէպի ծովապետ Լիսովսկու անունով:

ՄԱՆՉԵՍՏԵՐ, 18/30 ապրիլի: Հիւսիսային Անգլիայի ազատամիտ ընկերակցութիւնների 1500 պատգամաւորների ժողովը վճռեց բողոքել կառավարութեան պատերազմական քաղաքականութեան դէմ, գտնելով, որ Բի-կոնսթիլի քաղաքականութիւնը խաղաղութեան հաստատման համար միակ չարագիւր է: Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21-ին ապրիլի: Իշխան Գորչակովի առողջութիւնը լաւանում է: Սեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայիվիչ հասաւ ապրիլի 19-ին Օդեսա: Նորին Բարձրութեան ընդունելութիւնը փառաւոր և հանդիսաւոր էր: Վաղը Սեծ Իշխանին սպասում են Ս. Պետերբուրգում: Ս. Պետերբուրգից ուղևորվում է դէպի Կ. Պոլսի իշխան Կաթանով-Քոստովիչ, ռուսաց դեսպանի պաշտօնով, իսկ Ս. Պետերբուրգում սպասվում է թիւրքաց դեսպան Նահիս-փաշա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21-ին ապրիլի: Թիւրքիանակ հայերի պատգամաւոր արքեպիսկոպոս Խորէն Նար-Բէյ, կատարեց Նիվսի պրոսպեկտի վրա գտնվող հայոց եկեղեցում հոգեհանգիստ ներկայ պատերազմի ընթացքում ընկած հայ զինուորների յիշատակին և հանդիսաւոր մարտիկներ Քաղաւոր Կայսրի երկարակեցութեան համար:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ե Ն

ԱՌՈՂՋԱԿԱՆ—ԱՍԵՆԻՉԱՅԻՆՈՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԻՑԻ ՊԵՏԻՍՈՐԸ Ծաղկի տարածության հիմնարկը առաջին անգամ համար, հրատարակում է իր բաժնի մեջ (Թիֆլիսի առաջին, երկրորդ, երրորդ և առանձին մասերի) բնակիչներին որքան կարելի է շուտով կարել երկրաների ծաղկերը: Մտղիկը պատուաստում են երկրաբաններ, որքան է կիրակի օրերը առաջատան ժամը 10-ից ծաղկի պատուաստող հիմնարկում մեջ, որ գտնվում է Չավչավաձևակայա փողոցում: Ղեկավարական գրասենյակը գտնվում է Վաղվաշի դեմքում: Բացի այդ առողջական առաջին բաժնիը ունի ծաղկի պատուաստող, որ ամեն օր ծաղկերի պահպանությունը համեմատաբար է պատուաստում սննդով:

3—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ, որ ուսում է առնել Փարիզում, ցանկանում է սույն քաղաքում ՍԵՐԵՆ ԼԵՂՈՒՄ ԳՐԱՆԵՐ: Կարող է նայել հասցեներին ՍԵՐԵՆՈՒՄ ՊԵՏԻՍՈՐԸ փողոց: Հասցեն կարելի է իմանալ «ՄՇԱԿԻ» Խմբագրատանը:

8—10

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

Վաճառականներից և անը շինարարներից սույն ձևերով կամ գործարանների պրեկտիվային պատահաններով պատահանների, գունների և վաճառանների կազմածքներ (приборы): Բացի այդ ծախվում են մանր կուպլեր (замки), գլանակներ, դառեր, սողնակներ (задвижки), որոնք գործ են ածվում արկղերի, կոճեղների, պահպանների և բազմաթիվների համար: Մտնվում են նմանապես ծորակներ (краны), սամոլարներ, մոմակներ, և այլն: Այս բոլոր իրերը կարելի է գտնել Վաղվաշի փողոցում գտնված յայտնի գործարանից են: Ցանկացողները Թիֆլիսում պետք է դիմեն «Русский Магазин» Միկայելովիցայա փողոց № 85:

Կովկասի համար գործակալ Ա. ԿրիժնևոՎի:

5—6 (2)

ТИФЛИССКІЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ
ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Տարածվող փողոցի վրա Յունաց եկեղեցու դիմաց տուն № 22
Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպասողներին, որ այդ գործարանում գործվում են և նորա մեջ միշտ մեծ քանակությամբ գտնվում են ամեն տեսակ ԿԱՇՈՒՆԵՐ կոշիկների, թամբերի, կառքերի արտեսանների համար և նայելու համար կաշիներ: Մեծ քանակությամբ վաճառելու կատարվում է գործարանի կանաչարանում, որտեղ ընդունվում են և պատուէրներ: Մաս մաս ծախվում է Միսի մայր եկեղեցու դիմաց գտնվող մազաղնիում:

11—25 (2)

ՄԻ ՕՐԻՈՐԿ, որ խոսում է ՌՈՒՍԵՐԵՆ ԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԳ ընդունելու օգնությամբ և նայելու դասեր աղյուսաճարվում է իր ծառայությունները ուղեկցել ԿԱՇՈՒՆԵՐ ԿԱՇ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐ, ՈՐՈՒՄ ԱՄԱՌԸ ԹԻՖԼԻՍԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ ԵՆ ԳՆՈՒՄ: Հասցեն պետք է թողնել «ՄՇԱԿԻ» Խմբագրատանը:

Շուտով հրատարակվում են իմ ժողովածու «Անեկդոտները», որոնք պարունակում են իրանց մեջ շատ երկայնիկ պատմություններ: Տպվելու են բաժանորդագրություններ, ամեն մի օրինակի գինը 50 կոպ. է: Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել պ. Չաբարիա Գրիգորեանցի գրապատասխանում:

2—3 Գ. Ներսիսյանեանց.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔՍՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ

Հիմնվելով Թիֆլիսի Կուսակի փետրվարի 22-ի վճար վրա, Գաղափարային Վարչութիւնը յայտնում է հետևեալը: Ներկայ տարվայ մայիսի 1-ից սկսելու ընտրողական ցուցակներ կազմել և այն անձինք, կամ պետական և այլ հիմնարկութիւնները, որոնք վրա քաղաքային սուբբերի արտաբերներ կը լինեն, չեն մանր ընտրողական ցուցակների մեջ: 2) Այն անձինք, որոնք քաղաքի մեջ չունեն անշարժ կարուածներ, այլ վերջինով առևտրական գոյութեաններ, ստացել են իրաւունք մասնակցել ձայնաւորների ընտրութեանը, պարտաւոր են մինչև մայիսի մէկ ներկայացնել վարչութեանը վկայական, որ նորա մերժելու երկու տարիները մշտական, կամ ժամանակաւոր բացակայութեամբ գտնվել են քաղաքում: Այդ վկայականները պետք է տան կամ այն դատարարի գլխաւորները, որոնք ներկայացնողները պատկանում են, կամ պոլցիան, կամ այն ամստէրները, որոնք տանը բնակվել են: Այս վերջին համարմանը տան տիրոջ ստորագրութիւնը պետք է նստարը վաւերացնել: Այն անձինք, որոնք այդպիսի վկայականներ չեն ներկայացնել մինչև նշանակած ժամանակը չեն մանր ընտրողական ցուցակի մեջ: 3) Այն անձինք, որոնք ընդհանուր կարուածներ ունեն, կամ նոր են գրել և չեն նշանակած գոյութեանների գրքում պարտաւոր են մինչև մայիսի մէկը յայտնել Վարչութեանը իրանց մասնակցութիւնը և ցոյց տան կարուածի այն մասը, որ իրանց է պատկանում: Նրանք, որոնք մինչև նշանակած ժամանակը չեն յայտնել իրանց իրաւունքները չեն մանր ընտրողական ցուցակը: 4) Ընտրողների հաւատարմատարները, կամ անչափահասները հաղաբարձուները արտաբերան են ներկայացնել առաջինները: Հաւատարմութեամբ նշանակած գրոշմած թղթի վրա (ներքին գործերի մինիստրի շրջաբերական նոյնիք. 26-ից 1876 թ. № 40, 766), հաւատարմութեամբ պետք է նստարից հաստատված լինել, և թէ հաւատարմատուի ստորագրութիւնը Վարչութեանը յայտնել է, իսկ հաղաբարձուները պետք է ներկայացնեն հաղաբարձական հիմնարկութիւններից հաստատութիւն: Նույնպէս հաւատարմատարները, նայելու հաղաբարձուները կը մանր ընտրողական ցուցակի մեջ իրանց հաւատարմատուների կամ հաղաբարձուների անունով մի և նոյն համարով, իսկ ընտրողների ժողովը նիստի ժամանակ այդ անձանց անունները կը կախվեն այն դահլիճի մեջ, որտեղ նիստ կը լինի:

2—3

1—(մարտի 31-ին, սպրիլի 22)

МАГАЗИНЫ ОТДАЮТ СЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕЕЪ АРЦРУНИ.

ԱՐՇՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ

ՇԱՏ ԷԺԵՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՉՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽՆՆՈՒԹՅՆԵՐԸ

Թիֆլիսի կենդանիների հովանաւորութեան վարչութիւնը յայտնում է ամենքի գլխաւորութեանը որ համաձայն ընդհանուր ժողովների վճիռների, այս վարչութեան կազմակերպութիւնը ներկայ ժամանակում հետեւեալն է. նախագահ Ս. Ա. Տայիզին, փոխ-նախագահ Ի. Ի. Կրիլանի, վարչութեան անդամները. Ի. Ի. Զորջան, Մ. Ն. Գրիգորեան, և անդամակազմի անդամները. Նազի-Համիր-Էֆենդի-Մուստաֆայ-Էֆենդի-Չաղէ, վարչութեան անդամութեան կանդիդատները Մ. Կ. Լոմիզէ, Ա. Ի. Տիրիսազէ, Ա. Ի. Շամխարով, զանապաղ Ս. Գ. Սերգեյեւի, զանապաղ Ս. Ի. Մեղեքեւի և քարտուղարի կանդիդատ Ս. Ս. Շուկին:

Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցի վարչութիւնը յայտնում է, որ իրանց երեխաներին ծաղկի կարել ցանկացողները, կարող են հիւանդանոցին դիմել, որտեղ ծաղկի պատուաստելը բժիշկների ներկայութեամբ կը կատարվել երկուշարթի և ուրբաթ օրերը 10-մինչև 12 ժամը: Մտղիկ պատուաստելու վճարը 30 կոպ. է, իսկ աղքատների համար ծաղկի կարելը ձեր է:

Կրեկտորի տեղ Վէրմիշէվ:

3—3

ՊԵՏԻՍՈՐԸ		Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց		ԹԻՖԼԻՍ 1878.			
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Ապրիլի 21-ին)	Բ.	Կ.	ԶԵՆՈՒԳԻՐ	ԻՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-ԹՈՒՂԻ	ՓՕՍ	ԲԺՇԿԱՆՈՑ	«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԻՍԱՆԵՐ
Ոսկի (սորումներով)	8	40	Կովկասի և Ան-գրիպիտի քաղաքները	1			
Հին 82 սր. մ. արծ. 1000 մ.	1450		Ռուսաստան	2			
Հին 20 կ. 72 սր. 1000 մ.	1270		Ալեքսանդր	3			
Վերջինի 50/100 առաջի վա- խտութեան սուր. 100 մ.	233		Անդրիա	4			
Նրկորդ 5% վրդիներ	235		Գերմանիա	2	88		
Մարտիկ կարու 265	258		Ֆրանսիա	3	75		
Լոնդոնի կարու (դրեայի վրա)	9	60					
Վենայի կարու 112 զ.	100						
Վարկի բարակը	5	70					
Առևտրական բանկի ակ- ցիան 200 մ.							
Փոփի Թիֆլիսեան երկա- թուղու ակցիան 125 մ.	125						
Շաքարը բրոցիլ	8	50					
» միս տեսակը	8	40					
» շաքարազր	6						
» տրանդիլ	6	40					
» մարսի վարած	12						
Բամբակը կրեանու Ա- մերիկայի սերմը	8	20					
Միս տեսակը հին սերմը	7	20					
Բուրգը թուշի	8						
» թարաքալի	4	50					
Ալիւր Երազալու	2						
» կրեանի							
Գարին	1	50					
Մամր բնածարսի (seap.)	13	30					
Մետաքսի կրեանի	160						
Կախի թուշի	90						
Կոկոնը կրեանի (բուս.)	35						
Ֆրիզանը (շաքար) Ագու- կեաց	40						
Կոֆէն մոխրի	25						
» կրեանի	18						
» մարտիկայինը	17						